



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ՄԳ/248-2019

ք.Արտաշատ

04 11 2019թ.

ԱՐՄԻՆԵ ՎՐԵԺԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով և 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, “Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 15-ին <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան N5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարած ուսումնասիրության արդյունքները

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջը ոչ պատշաճ կատարելու՝ դպրոցի կանոնադրության 48-րդ կետի 13-րդ ենթակետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու համար <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան N5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Վրեժի Դավթյանին հայտարարել խիստ նկատողություն:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 04/11/19 18:15:06 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝

Signed by: SARGSYAN GARIK 2811870695

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ